ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 50-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 16-ի թվով 5-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի ավագանու 15.05.2024թ. թիվ 54-Ա որոշմամբ ստեղծված խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
3.«Սամ Էներջի» ՍՊԸ-ի կողմից Վայք համայնքի Սարավան բնակավայրում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելուն նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
4.«Ջիէմէն Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից Վայք համայնքի Զառիթափ բնակավայրերի վարչական տարածքում հանքաքարի և/ կամ հանքանյութի և/ կամ խտանյութի վերամշակման գործարան կառուցելուն նախնական համաձայնություն տալու մասին /զեկուցող՝ Գ. Գևորգյան/:
5. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան փողոց 54/2 հասցեում գտնվող, 258.15 քմ մակերեսով տարածքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
6.Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փ. 8/11 հասցեում գտնվող 0.00533 հա մակերեսով համայնքային սեփականության հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ս.Իխտիարյան/:
7.Վայք համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
8.Վայք համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 51-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.05.2024Թ. ԹԻՎ 54-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշմամբ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 15.05.2024թ. թիվ 54-Ա «Վայք համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և Վայք համայնքի ավագանու 17.10.2022 թվականի թիվ 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Որոշման 3-րդ կետի 10-րդ ենթակետում «առաջին կարգի մասնագետ» բառերը փոխարինել «առաջատար մասնագետ» բառերով:

1.2 Որոշման 3-րդ կետը լրացնել նոր 11-րդ ենթակետով՝ (3.11 Սոնա Զաքարյան- Մանկական զարգացման հիմնադրամի սոցիալական աշխատող-հանձնաժողովի անդամ):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 52-Ա

«ՍԱՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, ՀՀ կառավարության 28.12.2023 թվականի N 2343-Ն որոշմամբ և հիմք ընդունելով 22.05.2025 թվականին կայացած հանրային լսման արձանագրությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Սամ էներջի» ՍՊԸ-Ի կողմից Վայք համայնքի Սարավան բնակավայրի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն համարվող 5,46 հա մակերեսով հողատարածքի վրա արևային ֆոտովոլտային կայանի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական շենքում կայացած՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

2025 թվականի մայիսի 22-ին՝ ժամը 12:00-ին, Վայոց ձոր մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Սարավան բնակավայրում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծի և նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Առավոտ» օրաթերթի՝ 2025 թվականի ապրիլի 16-ի հերթական համարում:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վայք համայնքի ղեկավարի օգնական Մեսրոպ Մեսրոպյանը, Սարավան բնակավայրի վարչական ղեկավար Ռազմիկ Մանուկյանը, Վայքի համայնքապետարանի աշխատակիցներ, Սարավան բնակավայրի բնակիչներ, «Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը, «Էկովիլ» ՍՊԸ կապալառու և նախագծող Հովհաննես Գևորգյանը:

Սարավան բնակավայրի ղեկավար Ռազմիկ Մանուկյանը ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև խոսքը փոխանցեց «Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանին:

Ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը ողջունեց մասնակիցներին և տեղեկացրեց, որ քննարկվող նախագիծը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, ենթակա է փորձաքննության, որի համար նախատեսվում է՝ 2 հանրային լսում:

«Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը քննարկման մասնակիցներին տեղեկացրեց, որ նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը կառուցվելու է Սարավան բնակավայրի տարածքում և զբաղեցնելու է 5.46 հա (հեկտար) մակերես, այդ հատվածում կառուցվելու է նաև ֆոտովոլտային էլեկտրակայանի ենթակայանը:

«Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը տեղեկացրեց նաև, որ շրջակա միջավայրի վրա որոշակի նվազ ազդեցություն կարող է առաջանալ էլեկտրակայանի շինարարության ընթացքում՝ կապված հողային աշխատանքների հետևանքով օդային ավազան արտանետումների հետ, բայց ՇՄԱԳ

հաշվետվությունում նախատեսված են միջոցառումներ օդային ավազան արտանետումների նվազեցման հետ կապված:

Նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի տեխնիկական բնութագրերի մասին Սարավան բնակավայրի ազգաբնակչությանը ավելի մանրամասն տեղեկացրեց «Էկովիլ» ՍՊ ընկերության կապալառու նախագծող Գևորգյան Հովհաննեսը՝ նշելով, որ 5.46 հա (հեկտար) մակերեսի վրա կառուցվող էլեկտրակայանը ունենալու է 5 ՄՎտ հզորություն:

Նշվեց նաև, որ բուն շինարարական աշխատանքները տևելու է մոտավորապես մեկ տարի, իսկ շինարարաության ընթացքում բացվելու են աշխատատեղեր, իսկ արևային կայանի շահագործման ընթացքում անհրաժեշտ է լինելու շահագործման և պահպանման համար հիմնական թվով հինգ աշխատակից: «Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանը պատրաստակամություն հայտնեց բնակավայրում նոր կոյուղու ցանցի կառուցման ծրագրում ներդնում ունենալու կապակցությամբ և այլ սոցիալ ծրագրերի մասով:

Քննարկմանը մասնակից՝ Սարավան բնակավայրի բնակիչները իրենց հուզող հարցերը ուղղեցին «Սամ Էներջի» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Խաչիկ Մարտիրոսյանին:

Հարց.՝

- Որ բնակավայրից են լինելու շահագործվող էլեկտրակայանի աշխատողները:

Պատասխան.՝

- Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շահագործման դեպքում առաջնահերթություն կտրվի Սարավան բնակավայրի բնակիչներին:

Քննարկմանը մասնակից բնակիչները ողջունեցին նախաձեռնությունը:

Բնակիչների կողմից առարկություններ չհնչեցին և ավարտվեց քննարկումը:

Քննարկումների վարող և պատասխանատու՝

Վայքի համայնքապետարանի գյուղատնտեսության և

բնապահպանության բաժնի պետ Գ. Գևորգյան

Զեռնարկողի ներկայացուցիչ՝

«ՍամԷներջի» ՍՊԸ տնօրեն Ս. Գրիգորյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
[illegible]	[illegible]	093 02 66 96
Հրաչյա Գևորգյան	[illegible]	033-70-33-55
[illegible]	[illegible]	094107216
[illegible]	[illegible]	094012249
[illegible]	[illegible]	044300203
[illegible]	[illegible]	077908613
[illegible]	[illegible]	094078716
Գարիկ Հովհաննիսյան	[illegible]	094735083
[illegible]	[illegible]	077333931
[illegible]	[illegible]	098310868
[illegible]	[illegible]	098828640
[illegible]	[illegible]	094751787
[illegible]	[illegible]	077-97-85-97

22.05.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 53-Ա

«ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԵՎ/ ԿԱՄ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԻ ԵՎ/ԿԿԱՄ ԽՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 13.05.2025 թվականին «ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ նախնական համաձայնություն «ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող հանքաքարի և/կամ հանքանյութի և/կամ խտանյութի վերամշակման (կորզման) գործարանի կառուցման համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնք, Զառիթափ բնակավայր

13.05.2025թ.

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական շենքում 13.05.2025թ. ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Ջիէմէն Գոլդ Մայնինգ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախաձեռնած հանրային լսում՝ հանքաքարի և/կամ հանքանյութի և/կամ խտանյութի վերամշակման /կորզման/ գործարան կառուցելու վերաբերյալ:
Հանրային լսմանը մասնակցեցին՝
Վարող – ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը,
Նախաձեռնող – «Ջիէմէն Գոլդ Մայնինգ» ՍՊԸ տնօրեն Կարո Միքայելյանը, ընկերության ներկայացուցիչներ Արամ Բաբիյանը և Հովհաննես Նիկողոսյանը:
Շահագրգիռ հանրություն – Զառիթափ բնակավայրի և Վայք համայնքի բնակիչներ, այլ անձինք:

Բացման խոսքով հանդես եկավ համայնքի ղեկավարը, ողջունեց մասնակիցներին և տեղեկացրեց, որ հանրային լսում է նախաձեռնված ընկերության կողմից, և առաջարկեց լսել ընկերության ներկայացուցչին:

Խոսքով հանդես եկավ ընկերության տնօրեն Կարո Միքայելյանը, ով հայտնեց, որ ընկերությանն է պատկանում Սոֆի-բինա ոսկի-բազմամետաղային հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը: Տեղեկացրեց, որ ընկերությունը ցանկանում է կառուցել հանքաքարի վերամշակման գործարան, որի արդյունքում ստեղծվելու է մոտ 250 աշխատատեղ: Նա հայտնեց, որ տվյալ աշխատատեղերի հիմնական մասը նախատեսվում է հատկացնել Զառիթափի բնակիչներին: Հայտնեց, որ իրականացնում են և պարբերաբար նախատեսում են իրականացնել սոցիալական ծրագրեր:

Բնակիչներից մեկը հարց ուղղեց ընկերության ներկայացուցչին ,– որտեղ է կառուցվելու գործարանը:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց ,– գործարանը կառուցվելու է Զառիթափում: Զառիթափի վարչական ղեկավարին խնդրեց տեղը հստակ նկարագրել, քանի որ ինքը տեղանքին ավելի լավ է ծանոթ: Հայտնեց, որ գործարանի կառուցման տեղի ընտրությունը կատարվել է համայնքի հետ միասին: Համայնքի հետ միասին կառուցման համար ընտրվել է այն հատվածը, որը ամենաօպտիմալն է դրա համար՝ բնակավայրից հեռու, չօգտագործվող հատվածում:
Բնակիչներից մեկը հարց ուղղեց – ինչ գործարան է բացվելու,
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց – ոսկու հանքաքարի վերամշակման գործարան,
Այնուհետև նույն բնակիչը ուղղեց երկրորդ հարցը – ոսկու հանքը բացելուց բնակիչներից որևէ մեկը տեղյակ եղել է,
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց – հանքավարի թույլտվությունը առնվազն 2010 թվականից առկա է:
Բնակիչներից մեկը հարց ուղեց ընկերության ներկայացուցչին – ինչ տեխնոլոգիայով է աշխատելու գործարանը:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց - տեխնոլոգիան լինելու է ֆլոտացիա և ցիանացում,

Այնուհետև նույն բնակիչը անհանգստություն հայտնեց ցիանի վերաբերյալ,
Ընկերության ներկայացուցիչը արձագանքեց – ցիանը վտանգավորություն ունի, եթե իրեն ճիշտ չես օգտագործում, սահմանված պահանջները չես պահպանում,
Բնակիչներից երկու հոգի բացասական կարծիք արտահայտեցին կառուցվող գործարանի վերաբերյալ՝ նշելով, որ այն կնպաստի մթնոլորտային օդի և ջրի ախտոտմանը:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ նշված գործունեության իրականացումը նման ռիսկեր չի պարունակում, որովհետև ոսկու կորզումը իրականացվելու է փակ ցիկլով և արդյունքում ստացվելու է չոր և չեզոքացված ավազանման արդյունք:
Այնուհետև նույն բնակիչը ուղղեց հաջորդ հարցը ,– կարող եք համանման գործարանի օրինակ նշել,
Ընկերության ներկայացուցիչ Հ.Նիկողոսյանը ներկայացրեց մի քանի համանման գործարանի տվյալներ և մանրամասներ ներկայացրեց նախատեսվող գործարանի տեխնոլոգիայի մասով, մասնավորապես հայտնեց, որ աշխատելու են շրջանառու համակարգով, ցիանի արտահոսքեր չեն լինելու, ջրային պոչամբար չի լինելու, այլ լինելու է չոր պոչանքներ՝ պրոցեսի ավարտին քամվելու է և չոր ավազանման զանգվածը պահեստավորվելու է, և դրա արդյունքում հայտնեց, որ վտանգ չկա:
Բնակիչներից մեկը հայտնեց, որ Կապանում կար ջրային պոչամբար և յուրաքանչյուր բնակչին տվել էր 60.000-80.000 ՀՀ դրամ, և հարց ուղեց ընկերության ներկայացուցչին – որ չոր է գումար չեք տալու:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց - ընկերությունը սոցիալական ծրագրեր է իրականացնում:
Նույն բնակիչը ուղղեց երկրորդ հարցը – բնակիչներին թույլատրելու են, որ ստուգենք տեսնենք ցիանը 0,2 տոկոս է, թե 10 տոկոս է:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց – սա առաջին լսումն է, սրան հաջորդելու է փաթեթների ներկայացումը շրջակա միջավայրի նախարարություն, որտեղ ներկայացվելու է նախագիծ իր բացվածքներով, բանաձևերով կառուցվածքով, որը ուսումնասիրելու են ՀՀ-ում առկա բոլոր գերատեսչությունները և դրանից հետո նոր տրվելու է դրական կամ բացասական եզրակացություն:
Բնակիչներից մեկը հայտնեց, որ պետությունը թույլտ չի տալիս, որ իրենք հետագայում գան տեսնեն պայմանները,
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց – ընկերությունը թույլ կտա, որ բնակիչները ցանկության դեպքում պարբերաբար այցելեն և ստուգեն պայմանները:
Բնակիչներից մեկը հանդես եկավ առաջարկությամբ, որ հողի հատկացումը կատարվի բոլոր փաստաթղթերի ուսումնասիրությունը պատկան մարմինների կողմից, տվյալ փաստաթղթերը տրամադրվի համայնքին, և եթե ամեն բան նորմալ լինի, նոր միայն հողի հատկացումը կատարվի:
Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց – միանշանակ ընդունվում է առաջարկը, ավելին, հենց օրենքով սահմանված կարգն է այդպիսին, և եթե առաջին լսումը հաջողությամբ է ավարտվում, ապա դրանից հետո նախարարություն է ներկայացվում փաթեթը, որը ուսումնասիրվում է բոլոր գերատեսչությունների կողմից և դրանից հետո նոր միայն երկրորդ լսումն է իրականացվում, և դրանից հետո նոր միայն որոշում է կայացվում:
Բնակիչներից մեկը հայտնեց, որ Վայոց ձորը ռադիակտիվությամբ ամենաբարձրն է հայաստանում: Ընկերության ներկայացուցիչը առարկեց, հայտնեց, որ դա իրականությանը չի

համապատասխանում, և հայտնեց, որ համոզվելու համար կարող են սարքով ստուգել և համոզվել: Տվյալ բնակչի դիրքորոշմանը հակադարձեց նաև այլ բնակիչ, ով հայտնեց, որ երկար տարիներ աշխատել է հանքերում, և հայտնեց, որ ռադիոակտիվությամբ Վայոց ձորը չի առանձնանում մյուս մարզերից:
Բնակիչներից մի քանիսը հայտնեցին, որ մտավախություն ունեն և իրենք էլ չեն հասկանում տվյալ ոլորտից:
Ընկերության տնօրենը հայտնեց, որ մտավաղություն ունենալ պետք չէ, իրենք չեն իրականացնելու այնպիսի գործունեություն, որը կարող է վտանգի տանել իրենց: Առաջարկեց և հայտնեց, որ ցանկության դեպքում բնակիչները մասնագետ գտնեն, որի ֆինանսավորումը կիրականացնի ընկերությունը, և տվյալ մասնագետին ներգրավեն այս գործընթացին:
Այնուհետև ճառով հանդես եկավ մի անձ, ով հայտնեց, որ Եղեգնաձորի բնակիչ է, և իր ճառով բացասական կարծիք հայտնեց նախատեսվող գործունեությանը, տվյալ անձին հակադարձեցին տվյալ գործունեությանը կողմ հանդիսացող Վայք համայնքի բնակիչները, և նրանից պահանջեցին, որ նա չխոսի և բացասական կարծիք չհայտնի, և գնա իր համայնքում խոսի: Տվյալ անձի և Վայք համայնքի բնակիչների միջև առաջացավ կարճատև վեճ:

Հանրային լսման ընթացքում տեղի ունեցավ բաց քննարկում, տեղեկությունների փոխանակում կատարվեց մասնակիցների միջև:

Վարող՝ _____ Վայք համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյան

Նախաձեռնող՝ _____ «ՋիԷմԷն Գոլդ Մայնինգ» ՍՊ Ընկերության տնօրեն Կ.Միքայելյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		
[illegible]		091600492
[illegible]		
[illegible]		
[illegible]		
«[illegible]» ԱՁ		

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Անուն, ազգանուն	ստորագրություն	Հեռ.
[illegible]		
[illegible]		098875111
[illegible]		093535435
[illegible]		077909613
[illegible]		094735083
[illegible]		093026696
[illegible]		098472879
[illegible]		
[illegible]		094967582
[illegible]		093108-268

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 54-Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՓՈՂՈՑ 54/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 258.15 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանի 28.02.2025 թվականի թիվ 223 գրությամբ և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 22.05.2025 թվականի թիվ 630-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Որպես նվիրաբերություն ընդունել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան փողոց 54/2 հասցեում գտնվող, 258.15 քմ մակերեսով, 10-003-0024-0102-001-001 կադաստրային ծածկագրով, 15,065,072 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով տարածքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21022022-10-0026 վկայական) և համարել Վայք համայնքի սեփականություն՝ որպես մանկապարտեզ շահագործելու նպատակով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ Փ. 8/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,00533 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 481-րդ և 76-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառա17602արության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետին համապատասխան.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոցի թիվ 8/11 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0,00533 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ այլ հողեր, կադաստրային ծածկագիրը՝ 10-003-0011-0148) մրցույթային եղանակով, կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման ամսական վճարի մեկնարկային գինը սահմանել 5 000 (հինգ հազար) ՀՀ դրամ, ժամկետը՝ 5 (հինգ) տարի, նպատակը՝ խառը կառուցապատման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 56-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2.Վայք համայնքի 2025թ-ին բյուջեում հատկացնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 3 000 000 ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել բարեկարգման ոլորտը՝ որպես առաջնահերթություն:
7. Համայնքի ղեկավարին՝
1) Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) Համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկները ներկայացնել ավագանուն:
3) Իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

04 ՀՈՒՆԻՍԻ 2025թ.

ՈՐՈՇՈՒՄ N 57-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 12–ին, ժամը՝ 16:00–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ